

**«Արարատ» ամսագրի 150-ամյակին նվիրված գիտաժողով Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածնում**

Դեկտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Մայր Աթոռի գիտական հսկան» թեմայով գիտաժողով՝ նվիրված «Արարատ» ամսագրի 150-ամյակին: Գիտաժողովին ««Արարատ» ամսագրի անդրադարձը գրադարանային խնդիրներին» թեմայով զեկուցումով հանդես եկավ Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի տեղակալ Հայկանուշ Ղազարյանը:



